



## ԿՐՈՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՄԵՂՔԻ ԻՍԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՈՒՂԻՆՅՈՒԹ.

Որք մեռաք մեղացն՝ զինու տակա-  
տին ի ճամփ կացընք.

Թ. Ա. Հոռվի.

Այս մարդիկ, որոնք քրիստոնէութիւնը  
նրանով են կամենում ազգեցիկ գարձնել, որ  
մեղք խօսքը յաճախ են գործածում։ Նորա  
քրիստոնէի ներքին արժէքն էլ ըստ այնմ են  
որոշում թէ մեղք ասածդ ի՞նչ դեր է կա-  
տարում նորա մօտ։ \*

Այդ վարժունքը իւր արդարացի կողմն  
ունի, բայց նաև իւր վտանգաւոր կողմը, ո-  
րովհետեւ աւելի վնասակար է պարզէ և եղքը  
խօսքի անտեղի գործածութիւնը, քան Աս-  
տուծոյ անուան։ Յօյս ունիմ որ ասածս  
թիւր չի ըմբռնուիլ։

ՄԵՂՔ—այդ մի սուրբ խօսք է։ Նորա  
ի՞նչ եղածը չենք իմանում և չենք զգում՝  
մեղքից չենք սարսափում և փախչում։ Քա-  
նի դեռ Աստուծուն չենք ձանաշել։ Բայց այն  
բոպեից, երբ իմ հոգին բացուում է Աստու-  
ծոյ համար, սկսում եմ ըմբռնել թէ ի՞նչ է  
մեղքը։

ՄԵՂՔԸ թշնամութիւն է Աստուծոյ  
դէմ։ Այն բոլորը, ի՞նչ որ իմ կամ աշխարհի

մէջ Աստուծուն հակառակ է՝ ձգտումներ,  
մաքիր, գործեր, ժամանակաւոր հաճոյքներ  
կամ հաստատուն սկզբունքներ և կամեցողու-  
թիւն, բոլորը ես՝ իրբև քրիստոնեայ, մեղք  
եմ համարում։

ՄԵՂՔԻ հակառակը հաւատն է, որովհե-  
տեւ այն բոլորը, ի՞նչ որ իմ և ուրիշ մարդ-  
կանց մէջ գեպի Աստուծուն է ձգտում այսին-  
քըն՝ փափագ ձանաշել և հազորդութիւն ու-  
նենալ Աստուծոյ հետ վստահութիւն Նորա  
մեղ համար խօստացածների նկատմամբ, ե-  
րախտագիտութիւն Նորա բոլոր բարութեանց  
համար Նորա ս. կամքը կաարելու ցանկու-  
թիւն, այս բոլորը ես, իրբև քրիստոնեայ, ամ-  
փոփում եմ հաւատ մեծ և փառաւոր խօս-  
քի մէջ։

Քանի ես այդպէս եմ անում և հա-  
ւատք ունիմ մեղքի կապանքից ազատ եմ և  
մինչեւ անգամ ատում եմ նորան։ Եւ այս՝  
քրիստոնեայի համար, նաև Նորա երկրի վրայ  
եղած միջոցին, ոչ միայն կարելի, այլ և իրա-  
կանացող դրութիւն է։ Այս է փրկագործու-  
թեան արդիւնքը, և առանց դրան փրկուած  
համարուել ոչ ոք չէ կարող։

Այսպէս, քրիստոնեաների համար մեղքը  
մի սոսկալի խօսք է։ Մարդ չէ կարող մաքի  
տակ ձգել այն կամ արտասանել առանց  
ներքին սարսուռի։ Այս պատճառով պէտք չէ  
մեղք, խօսքն ի զուր աեղ բերան առնել։ Աս-  
տուծոյ մասին մտածելը երկիւղալի չէ, որ-  
քան երկար մտածենք՝ այնքան աւելի սիրելի

\* Խօսքն ի հարկէ բողոքական Գերմանացիների մա-  
սին է։ Մեղքի գաղափարը մեզանում դժբաղդարաց գրեր  
այլ եւն դեր լի կատարում։ մենք աշխատում ենք համոզել  
մեզ և ուրիշներին, քեզ մենք լինայ։

և ընդունելի կը լինի մեզ այդ մտածմունքը, բայց Նրանից բաժանուելու միաբը՝ թշնամութիւնը Նրա դէմ այնչափ սարսափելի է, որ մեզ պէտք է զարհուրեցնէ ամեն անդամ, երբ մեր հոգեոյ մէջ շարժում է, և շրթունքների վրայ ենել կամենում: Եւ չէնց զրա համար ևս հաւատում եմ, որ Աստուած աւելի շուտ կը ներէ երբ հւր, քան երբ մեղքի անունը ունայն տեղ յիշատակուում է:

Սակայն ի՞նչպէս է իրօք քրիստոնէական աշխարհում: Մեղք խօսքը մի սովորական բառ է գարձել գասատուութեան մէջ, ամրինի վրայ, աստուածաբանական զրութեանց մէջ և եկեղեցական կուսակցութեանց պայքարում: Քիչ է մնում ասեմ: Որ մեղք բառի հազուագէպ կամ յաճախ յիշատակութիւնը չափ է համարուում քրիստոնեայի իսկը որոշելու համար: Բայց ես լաւ զիտեմ: Որ երբ սցդ խօսքը չի գործածուում: Կարող է հետևանք լինել նաև մեղքի սարսափները զգացած և ճանաչած չլինելուն: Որ և նշան կը լինի քրիստոնէական ըմբուման կատարեալ պակասութեան: Միւս կողմից զիտեմ: Որ սուրբ Աստուծոյ անմիջական կենդանի տպաւորութիւնը՝ իւր և ուրիշների հոգու համար զգացած անձկութիւնը, կարող է մարդարէական եռանդ ներշնչել մէկին՝ մեղք, մեղք, նշանարանը շարունակ լիզուի վրայ ունենալու: բայց հազուագիւտ են մեղաց այդպիսի ընտրեալ քարոզիներ:

Իսկ սովորական քրիստոնեաների համար աղետարեր է մեղք խօսքը: Երբ իրեւ մի բժժացած և բժացնող սովորական խօսք հընչում է եկեղեցւոյ մէջ: Յաւում և խլճահարուում եմ ես: Երբ տեսնում եմ, որ մանուկները կրօնի դասերին մեղքի մասին խօսում են, իրեւ թէ մի խաղալիք լիներ այդ: Կարելի է խօսել անարդարութեան: Վաստ սավորութեանց, անհնարդանդութեան: Սխալների և պակասութիւնների մասին՝ թեթևամտութեան, յանցանքների և չարութեան մասին, բայց մեղք խօսքը պէտք է թողնել մի կողմ: Իրեւ բրազան և խորհրդաւոր ինչ մինչեւ որ ամենայարմար բոպէին յառաջ զայ և իրեւ քրիստոնէական խորհրդի նկատուի: Աւելի

կորսատարեր է ընդհանուր մեզանչականութեան գաղափարը, որ իշխում է նոյն իսկ զարգացած քրիստոնէական համայնքների մէջ: Իրեւ թէ առաջին խնդիրն այն լինէր Յիսուս Քրիստոսի անունը իրենց վերայ կրողների համար, որ միշտ մեղաւոր ճանաչուեն և հարկ չահեննեն թէ Աստուծոյ և թէ մարդկանց առաջ ուրիշ կիրպ լինել: Պօղոս առաքեալը Հռովմ: Գ. 23 Խօսքերը (Քանզի մէմնեքեան մեզան և նուազեալ են ի փառաց անտի Աստուծոյ) քրիստոնեաների համար չէ ասել:

Ո՞ւր և ե՞րբ է խօսում Քրիստոս մեղքի մասին: Նա եկել է, որ մեր մեղքերը բառնայ և սատանայի գործերը խափանէ: Նա մեղաւորների պատճառով շատ նեղութիւն է քաշել ներել է մեղքը, սրբազն պատերազմ է մղել նրա դէմ: Աստուծոյ Որդին՝ գէպի աշխարհի մէջ եղած թշնամին: Սակայն ոչ միանդամ չէ խօսել Նա մեղքի մասին (գոնէ ըստ Մատթէոսի), Մարկոսի և Ղուկասու): բայցի այն գէպքերից, ուր մեղաց թողութեան մասին է խօսքը: Ընդհակառակը նա մեղ ասել է, որ մենք կատարեալ պէտք է լինենք, ինչպէս մեր Երկնաւոր Հայրը կատարեալ է. Սորան սիրենք բոլոր սրտով բոլոր հոգեով և բոլոր տրամադրութեամբ, որպէս զի մերձաւորին ևս սիրենք ինչպէս մեր անձը և մեղ խոսացել է՝ որ Երկնաւոր Հայրը մեղ գորա համար իւր ու Հոգին պէտք է շնորհէ, եթէ միայն մենք ինդրենք: Նա երբէք գորա վրայ չէ աւելացրել. սակայն գուք չէք կարող հարկաւ այդ բոլորը կատարել՝ մեղաւոր էք և մեղաւորի կը մնաք: Նա պատուիրեց յիւրաւի իւր աշակերաններին աղօթել որ Երկնաւոր Հայրը իրենց պարագը ներէ, բայց միաժամանակ իրեւ ինքն ըստ ինքեան հասկանալի ընդունելով, որ նոքա անպայման և առանց բացառութեան իրենց պարտապաններին կը ներեն: Իսկ այդ մի չափազանց կարեւոր առաջնութիւնների մասին՝ թեթևամտութեան, յանցանքների և չարութեան մասին, բայց մեղք խօսքը պէտք է թողնել մի կողմ: Երբէ պարագան և խորհրդաւոր ինչ մինչեւ որ ամենայարմար բոպէին յառաջ զայ և իրեւ քրիստոնէական խորհրդի նկատութեան և փրկութեան մասին խօսեն է, և մեղքից ճշմարտապէս փրկուած լինելուն:

Մի խօսքով մեղքի մասին խօսելը ոչ մի օգուտ չունի. հարկաւորը՝ հաւատոյ, արգարութեան և փրկութեան մասին խօսեն է, և

Աստուծուն այնքան մօտ ապրելը, որ մեղքը  
մեզ ի սրտէ օտար, ատելի և զզուելի լինի:  
«Որք մեռաք մեղացն՝ զիարդ ատկաւին  
ի նմին կեցցեմք»: \*

—○○○—

## ԱՂԵՔՍԱՆԴՐ ՎԻՆԵՒ ՄՏՔԵՐԸ. \*\*

—○○○—

Խւրաքանչիւր որ մի ալիք է, որ Յաւի-  
տենականի գահը շփում անցնում է, թողնե-  
լով սակայն այնտեղ մի յարատե հետք՝ է մեր  
բարոյական՝ դործերը:

Ծշմարտութիւնը Աստուծոյ մօտ է և  
հոսում է հանգարտ ու խորհրդաւոր կեր-  
պով ամենքի հօր սրտից՝ ոչ հասարակութեան  
և ոչ պետութեան մէջ, այլ միայն գէպի այնպիսի  
հոգիներ, որոնք խոնարհութեամբ և զզմամբ  
այն ընդունելու պատրաստ են: Խոնարհու-  
թիւնն է ծշմարտութեան պրավոյրի բանա-  
լին:

Խոնարհութիւնը մոխրին է նման, որ  
կրակը ծածկում է, բայց միանգամայն և  
պահում:

Խսականութիւնը շատ աւելի զզուելի, ա-  
ւելի ծանր և յաճախ աւելի կորստաբեր է,  
քան ատելութիւնը:

Խսկապէս անկախ ընաւորութեան տէր  
անձը սովորաբար ձգտումն չէ ունենում իշ-  
խելու:

\* Փոխադրուած Christliche Welt Թերթից  
1897 թ. 31 հ.-ից:

\*\* Առնուած Christliche Welt թիրից № 39 և 40.  
Վիճակ խոսանական բուականներին ասուածարանութեան  
պրոմեսուր եւ Լաւզանում և Զուիցերիոյ «Ազատ եկե-  
ղեցւոյ» կազմակերպութեան համար զիաւոր աշխատող:  
Մելիսիդէկ Մրազանն է մեր մէջ, որ ամենից աւելի օգուտ  
է խողել նորա գրուածներից:

Սուտը գժբաղգութեան պէս է. նա երբէք  
մնակ չի զալիս:

Աշխարհի մտքով երջանիկ լինել՝ իրօք ե-  
րազել է նշանակում: զարթնելուն պէս այդ  
երջանկութիւնը դադարում է: Տեսնել իրենն,  
ինչպէս որ կան, առանց Աստուծոյ ճանաչե-  
լու ինչպէս որ է՝ չի կարող երբէք մարդու  
երջանկութեանը նպաստել:

Սիրուած լինելու երջանկութիւնը կա-  
տարեալ չէր լինի առանց փոխադարձ սիրոյ:  
Աստուծոյ բարձրագոյն շնորհը, աստուածային  
սիրոյ վերջին խօսքը, աւետարանի ամբողջ  
բովանդակութիւնը և փրկագործութեան վերջ-  
նական նպատակն այն չէ, որ սիրուած լինինք,  
այլ որ մենք սիրենք:

Եթէ Աստուծուն ճանաչում եմ աւելի  
իմաստուն եմ քան ամենամեծ զիտնականը.  
Եթէ Աստուծուն լսում եմ աւելի բարեկիրթ  
եմ քան ամենամուրը ազնուականը:

Կան այնպիսի ծշմարտութիւններ, որ  
ծաղիկների պէս կարելի է քաղել ս. Գլքից.  
Կան այնպիսիները, որոնք իրը անուշահոտու-  
թիւն բուրում են նորանից:

Շատերը որոնց գաղափարը բաժանել է  
իրարից, հաշառուում են կրկին զզացմունքի  
սահմաններում:

Հակառակուզի որոշ և աչքի ընկնող գե-  
րազանցութիւնը մեզ համար պահան վիրա-  
ւորական է քան աւելիեղիթ հաւասարու-  
թիւնը:

Բարեկամական է այն քննադատութիւնը,  
որ լուրջ է և անկեղծ: